ACM ICPC Ծրագրավորման միջազգային համալսարանական մրցույթի հրավեր

Հայաստանի համալսարանների թիմերը կարող են մասնակցել սպորտային ծրագրավորման համաշխարհային ուսանողական ամենամյա ACM ICPC մրցույթի Հայաստանի քառորդ եզրափակիչին, որն անցկացվելու է 2023թ. նոյեմբերի 4-5-ին Երևանի պետական համալսարանում:

Օլիմպիադան թիմային է, թիմում պետք է լինի երեք ուսանող (մագիստրատուրայի ուսանողները ևս կարող են մասնակցել): Թիմերը պետք է գրանցվեն օլիմպիադայի պաշտոնական կայքում՝ https://icpc.global/: Գրանցումը պարտադիր է, այն պետք է կատարել պաշտոնական կայքում մինչև նոյեմբերի 3-ը: Գրանցումը պետք է կատարեն թիմերի մարզիչները: Օլիմպիադայի կանոններին կարելի է ծանոթանալ այստեղ՝ https://icpc.global/regionals/rules: Հայաստանն ընդգրկված է Հյուսիսային Եվրասիա կիսաեզրափակիչ գոտում: Պաշտոնական կայքը՝ https://nerc.icpc.global/information/index.html:

Օլիմպիադայի հաջորդ՝ կիսաեզրափակիչը տեղի է ունենալու 2023 թ. դեկտեմբերի 11-13 Սանկտ-Պետերբուրգ, Բառնաուլ, Ալմաթի և Թբիլիսի քաղաքներում:

Սահմանված է կազմակերպչական վճար՝ մեկ թիմի համար 20.000 դրամ: Բանկային տվյալներ՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամ, ՀՎՀՀ – 01506928, Արդշինբանկ ՓԲԸ, Հ/Հ 2470101276000001:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել Ա. Անդրեասյանին (հեռ. 091 009514, էլ. հասցե՝ andreas@ysu.am):